

ՀՆՁՆԱԿ

ՍՈՎԸ

Սովը Հայաստանում անարգել կերպով անում է իր աղէտները: Սովատանջ Հայ ժողովուրդը, թողած իր հողի ու կայքի քիչ մնացորդներն էլ գիւղեց գիւղ, բազաբից բազաբ թափառում է և ժողոված իր վերջին ոյժերը՝ գաղթում գէպի օտար երկրներ: Հարկւրաւորներ են գաղթողները, որոնք մեծ մասամբ չուում են գէպի լովկաս և այնտեղ ապաստան են որոնում հոյ գիւղերում: Ի՞նչ կը լինի վախճանն այդ ողբերգական թափօրի: Ի՞նչ կը լինի վախճանը նաեւ նրա, այն ստուար բազմութեան, որ, կապված իր հողին, մնում է իր երկրում, զոհ դառնալով սովին ու մահին:

Այն սեւ թշուառութիւնը, որ այժմ սովի կերպարանքով զարնվել է ժողովրդի վրայ, ինչպէս արծիւն իր որսի վրայ, նախատեսնվում էր դեռ սրանից տարիուկէս առաջ: Եւ յիշուի. «Հնչակի» դեռ անցեալ 1893 թ. առաջին, յունվարի, համարում, խօսվում է սովի երեւալու մասին Տարօնի ու Ալաշկերտի կողմերում: Եւ դեռ այն ժամանակ մենք հասարակութեան ուշադրութիւնն էինք դարձնում այն կէտի վրայ, որ այդ սովը յետագայ տարին պէտք է ընդունէ ընդարձակ ծաւալ և ի վերջոյ դառնայ համաճարակ: Դա անխուսափելի էր: Դրանում համոզվելու համար միայն բաւական էր քննել երկրի անտեսական հանգամանքները: Հէնց այդ էր, որ մենք արինք, և դժուար չեղաւ յանգելու այն եզրակացութիւններին, որ այսօր իրականութիւն է այլ եւս:

«Բայց կայ մի հարց, — գրում էինք մենք անցեալ տարի, յունվար ամսին. — Ի՞նչ նշանակութիւն ունեն բարեգործական, մարդասիրական ողորմութեան լուծմաները, քանի որ պայմանները պահանջում են մաքառումն ո՛չ թէ մի պատահական, այլ մի սխտէմական, քրօնիկական երեւոյթի դէմ: Այդ աղէտը — դրա յաճախակի կրկնութիւններն անհերքելի ապացոյց են — դարձել է այլ եւս տաճկահայ ժողովրդի օրդանակաւ մի հիւանդութիւն: Հասարակութեան կողմից տրված օգնութիւններն այդ հիւանդութեան համար լոկ պալիատիվ միջոց է, ցաւը լոկ ժամանակաւորապէս դարմանող է, մինչդեռ ինքը ցաւը քրօնիկական լինելով,

պահանջում է էական օգնութիւն, պահանջում է արմատական դարման:

Հարկաւ, մենք դէմ չենք և չենք կարող դէմ լինել այն ինքնաբեր օգնութեան, որ այդպիսի աղէտների միջոցին հասարակութիւնը նիւթապէս անում է աղէտի ենթարկվածներին: Դա մի բնական պարտականութիւն է, որ պէտք է լրացնել ամենմի հասարակական աղէտի դէպքում: Բայց դա մէկ իսկական միջոց չէ այնպիսի մի երեւոյթի դէմ, որի պատճառն ու արմատը, հակառակ այդ միջոցի, շարունակում են գոյութիւն ունենալ: Ի՞նչ կարող է անել օրինակ, ներկայումս այն համեմատաբար չնչին եւ չափազանց ուշացած օգնութիւնը, որ անում է ռուսահայ հասարակութիւնը սովեալներին: Նա կարող է թերեւս փոքր-ինչ ամօքել լովկաս գաղթած սովեալների վիճակը, և ենթադրենք դժուարաբեւութիւնները եւս, այն, թէ նոյն իսկ թիւրքաց Հայաստանում էլ գտնված թշուառների վիճակը, բայց դա արդեօք առաջըքն առնում է անթիւ զոհերի, որ տեղի են ունենում ամեն օր. դա արդեօք կառնէ՞ առաջըքն նաեւ սովի անխուսափելի կրկնութեան առաւել կամ պակաս մօտ ապագայում: Ի հարկէ, ո՛չ: Հետեւաբար, պէտք է որոնել մէկ աւելի արմատական միջոց այդ սոսկալի երեւոյթի դէմ, որ թիւրքական ու «համիտի» զօրքերից աւելի շուտ և աւելի շատ է ամայացնում Հայաստանը: «Հետեւանքների և աղքեցութեան դէմ մաքառելու և դրանց վերացնելու համար, — գրում էինք մենք կրկին անցեալ տարի յունվարին, — նախ պէտք է իմանալ հետազօտել (հետեւանքների և աղքեցութեան) պատճառները և այնուհետեւ պատճառների ներքին բնութիւնը և համեմատ՝ որոշել, թէ ի՞նչ միջոցներ կարող են ծառայել նպատակին»:

Թէ որն է պատճառը ժողովրդի ներկայ սովի, ընդհանուրի պատասխանն է — երաշտը: Դա մի պատասխան է, անշուշտ, որ դեռ առանձին ոչինչ չէ բացատրում, այլ միայն մատնանիշ է անում, թէ ի՞նչ առիթով երեւան եկաւ սովը և ո՛չ թէ ի՞նչ պատճառով: Բայց ինչո՞ւ բնութեան այդ կոյր խաղը, այդ պատահական երեւոյթը, երաշտը, պէտք է առիթ լինէր սովի այնպիսի պողատու ու բերրի երկրում, ինչպէս Մեծ Հայաստանը, ուր, հետեւաբար, գիւղական արդիւնաբերութիւնն առհասարակ կարող է այնքան առատ լինել, որ պաշար կը մնայ յետագայ մի տարւայ համար էլ: Հէնց

իրապէս խնդիրն էլ նրանումն է, որ չը նայած իր հողի բերրիութեան, հայաստանցի գիւղացին չէ կարողանում օգտվել դրանից: Ինչո՞ւ, ինչպէ՞ս և որի՞ համար նա աշխատէ ձեռք բերել հողից այն ամենն, ինչ նա կարող է տալ: Ո՞ր են վաճառանոցները երկրի մէջ, որ այդ արգիւնաբերութիւնը դուրս հանվէր. ո՞ր են այն ճանապարհները, որ միջոց տային դրա արտահանութեան: — Երկու միջոց, որով կարելի էր զարկ տալ երկրի առեւտրին և երկրում մուտք կը գործէր դրամը, որ այսօր չըկայ գրեթէ, և այդպիսով միջոց կըտար գիւղացուն, որքան հնար կայ, վճարել տէրունական ծանր հարկերը և գէթ մասամբ ազատվել այն վաշխառուներից ու զըրոյստէրներից, որոնցից նա դրամ է պարտք անում այդ հարկերի վճարման համար: Բայց ի՞նչ ելք. — ջրից կրակի մէջ ընկնել կամ կրակից՝ ջուր: Թեոյ: Եւ ստիպված չէ՞ արդեօք նա, գիւղացին, այնքան միայն արգիւնաբերել, որքան անհրաժեշտ է իր և իր գերդաստանի սեփական գործածութեան համար, որպէսզի տասանորդ հարկը կտրելին չափ քիչ լինի: Ստիպված չէ՞ արդեօք բացի կառավարութեանը տալիք մասից, իր արգիւնաբերութիւնից առանձին մասեր էլ յատկացնել վաշխառուներին, վանքերին, շատ տեղեր քիւրդ բեկերին, շատ տեղեր էլ կալուածատէրերին և ստէպ ամեն-մի քմահաճ պաշտօնեային, զապթիէյին անգամ — օտարակերների այդ ամբողջ դասակարգին: Եւ այդպիսի տնտեսական պայմաններում բնական չէ՞ արդեօք գիւղական աշխատանքի աւելի ու աւելի նուազումը, գիւղական արգիւնաբերութեան քայքայումը, գիւղական հողերի ու անաշիւ կենդանիների — պարտքերի և այլ ձեւերի տակ — աւելի ու աւելի անցնիլը դրամատէրերի, մեծ կալուածատէրերի ձեռքը, գիւղացիների նիւթական — հողային, արգիւնաբերական ու ապրուստի միջոցների — կարողութեան աւելի ու աւելի ցածրանալը և, ընդհակառակը, միւս կողմից՝ զրամի աւելի ու աւելի մեծ դեր ու նշանակութիւն ստանալը և դրա մէջ զգացված կարիքի անընդհատ աճիլը: Այդ բոլորն արդեօք յարատեւ ու կամաց մաշող սովի վիճակ չէ՞: Այդ բոլորն արդեօք չէ՞ հասցնում գիւղացու նիւթական միջոցները մինչեւ իրանց մինիմումը (minimum), ամենացածր աստիճանը, որից մի քայլ էլ հեռու՝ արդէն բացվում է աղքատութեան վիճը: «Եւ ահա այդ հանգամանքներում, — գրում էինք անցեալ տարի յունվարին, — բնութեան մէկ աննպաստ կոյր խաղ — և հազարաւորներ գիւղական ժողովրդից փռվում են դեանի վրայ, օրերով քաղցած, հիւանդ, մերկ, սովից կատաղած, պատրաստ միմեանց պատառելու, և ի վերջոյ շարժվում են անխուսափելի մահի ճիրանները: Ներկայ տնտեսական պայմաններն իրանք են պատրաստում այդ աղէտը, — եղբակացնում էինք մենք, — որի չեղած ժամանակն իսկ՝ վաշխառուի շնորհով սեփականազուրկ դարձած գիւղացին պանդխտում է խուսափելու

համար իր մշտական սովից, որ ներկայ համաճարակ սովից տարբերվում է նրանով, որ միայն կամաց-կամաց քայքայող, մահացնող սով է: Ինչդիրը գոյութեան խնդիր է, — շարունակում էինք մենք: — Գիւղատնտեսական արգիւնաբերութեան աւերիչ պայմանները, այդ արգիւնաբերութեան անկած վիճակը, գիւղական ժողովրդի իր յոյժերից բարձր պարտքերի տակ ընկած լինելը, տէրութեան ֆինանսական (դրամական) ու հարկային սիստեմը, տիրող եղանակն — ահա հայ ժողովրդի մէջ առաջացած սովի բուն պատճառները:»

Ո՞րն է այն միջոցը, որ հնարք տար գիւղացուն դուրս գալ իր կեանքի այդ մահացնող շրջանից: Ո՞րն է այն միւս միջոցը, այն հասարակական աշխատութիւնը, ձեռնարկը, որ հնարաւոր դարձնէր այն առաջին միջոցի գործադրութեան:

Ինչ մենք առաջ ենք ասել, նոյնը կը կրկնենք եւ այժմ. դա գիւղատնտեսական աշխատանքի ներկայ տիրող պայմանների արմատական յեղափոխումն ու բարենորոգումն է: Պէտք է վերացնել այն բոլոր պատճառները, որ առաջացնում են գիւղական թշուառութիւնը և դրա շնորհով սովի յաճախակի կրկնութիւնները: Մենք հարկ չենք համարում այսօր կէտ առ կէտ առաջ բերել այն մի շարք բարենորոգումների թւահամարը, որ մենք արել ենք անցեալ տարի: Ամիսներ այդ պահանջները մի քանի խօսքում: Ներկայ հարկային սիստեմի, եղանակի ու ամեն կերպերի վերացումն և հաստատութիւն առաջագիմող միակ և ընդհանուր սիստեմի, հողատիրական ձեւի արմատական վերանորոգում՝ համաձայն գիւղացի դասի շահերի. գիւղացուն աղատել պարտքերից, գիւղական աշխատանքը հովանաւորող օրէնքների ու կարգերի հաստատումն. կառավարական ֆինանսական սիստեմի արմատական վերանորոգումն, և այլն: Գրանք են այն միջոցները, որ կարող են առաւել կամ պակաս էական կերպով օգնութիւն հասցնել հայ գիւղացուն, հետեւաբար, փրկել նրան իր ներկայ յարատեւ և անդադար աճող խորին թշուառութիւնից:

Ուրեմն, այդ ամենն ասելով, մենք անհրաժեշտ ենք համարում երկրի տնտեսական-հասարակական և քաղաքական կարգերի, երկրի դրութեան հիմնական յեղափոխութիւն: Այո, իրերի ջօրութիւնը, երկրի տնտեսական վիճակը և դրանցից ծագած տնտեսական պահանջների տրամաբանութիւնը, ժողովրդի հասարակական քաղաքական հանրակացութիւնը, ապա գիտական միտքը, զգացող խիղճը — բոլորը ճակատագրական անխուսափելի և միակ են դարձրել այդ ելքը: Գրանից դուրս՝ չը կայ փրկութիւն: Գա է այն պատմական քայլը, որի միջոցով մենք պէտք է ձգտենք, ջանանք ու աշխատենք ձեռք բերել այնպիսի հանրակացութեան կերպեր, որոնք երաշխաւորեն աշխատաւոր ժողովրդի բարեկեցութիւնն ու հանրակողմանի առաջագիմութիւնը և

երկրի տնտեսական, որով եւ քաղաքական ու հասարակական, ոյժերի ազատ զարգացումը:

Այդ էր մեր ասածը անցեալ տարի, այդ է նաև այսօր:

Այսպէս, մեր նետը դարձեալ եւ միշտ պէտք է ուղղենք միևնոյն վահանի դէմ — տիրող բոլոր կարգերի դէմ, թիւրքական բէժիմի դէմ:

Այդ նետը թող լարվէ, թող չը մնայ իր կապարձում: Նա պէտք է լարվէր, եւ լարված է արդէն...

Թ. Գ. Թ. Ե. Կ. Յ. Ո. Ի. Թ. Ի. Ի. Ն. Ն. Ե. Բ.

ՆԱՍԵԱՆԵՐ ԹԻՐԻՔԻՆԵՐ

Կ. Պոլիս, 14 Ապրիլ 1894.

Պատրիարքին՝ վրայ սպանութեան փորձ անող Յակոբը տակաւին ինքնազոհական բանտն է, ուր խիստ տանջանքներու կենթարկեն զինքը: Հարցաքննութիւններէ մէջ իր առաջին ըսածները միշտ կը կրկնէ: Յակոբի գործի պատճառաւ շատ մը ձերբակալութիւն տեղի ունեցաւ, որոց մէկ մասը անպարտ արձակուած են. միւսները դեռ բանտն են: Հրաման գացած է իւսարիա՝ շղթայակապ Կ. Պոլիս բերելու շաքարագործ մը, որուն քով ժամանակաւ աշակերտութիւն ըրած է եղեր Յակոբ: Պատրիարքը տակաւին իր նախկին կէս հիւանդ վիճակի մէջ է: Այդ թշուառականին հրաժարականը մտադրութիւն կայ ընդունվելու, կրտսի: Սուլթանը մտածեր է թէ հայկական խնդրի բոլոր մեծ ու փոքր դէպքերը՝ Ալեքեանի օրով պատահեցան եւ թէ այդ կղերականը սաստիկ կը զայրացնէ յեղափոխականները, հետեւաբար թերեւս այլ եւս չը պատահին, եթէ անոր տեղ մէկ ուրիշը պաշտօնի կոչուի: Բայց միւս կողմէն հզօր անձինք կը ջանան համոզել սուլթանը չանել այդ քայլը, զի զիջած կըլայ յեղափոխական ու իշխման ձայնին: Խօսք կ'այ, որ Ալեքային երեսփ. ժողովին մի անգամ եւ եթ թոյլտուութիւն պիտի տրուի գումարուելու, որպէսզի նոր պատրիարքի եւ նոր քաղ. ժողովի ընտրութեան ձեռնարկուի: Աւելորդ է ըսել թէ, երբ Ալեք. ժողովի գումարման հաւանութիւն տրուի, երեսփոխանութեան վրայ անողզակի ճնշում պիտի բանեցնեն Պաշտօնական քաղաքականութիւնով՝ մէկը ընդունելու: Երեսփոխան կոչուած վախկոտ ու զէվզէկ անձերուն, ի հարկէ, վճռական ժամուն պիտի պակսի բարոյական ու քաղաքացիական արիաստութիւնը, որ ատենց համար խիստ օտար եւ խորթ բան մըն է...

Բամսղանի կիսուն շատ կարեւոր դէպք մը պատահեցաւ այստեղ: Սուլթան Մէհմէտի մզկիթին մէջ, աղօթատեղոյն ներքին պատերուն վրայ գիշերանց խոշոր յայտարարութիւններ՝ փակցուած էին թիւրքերէն տառերով եւ թիւրքերէն լեզուով: Այդ յայտարարութիւնները՝ թիւրք ժողովուրդը կը գրգռեն սուլթանին դէմ, որ յիշամական կրօնի սրբութիւնը ոտնակոխ կրնէ՝ եւ իր յիշառական, անբարոյական եւ աւագակ՝ նախարարներուն դէմ: Կառավարութիւնը ահա ու սարսափի մէջ մնաց. այն օրէն ի վեր ամենամեծ հակողութիւններ ի գործ կը դրուին յայտարարութեան՝ հեղինակները

գտնելու, բայց տակաւին մինչեւ հիմա որ եւ է հետքի մը վրայ չիկան: Թիւրքական հասկացող, կրթեալ շրջանակներու մէջ դժգոհութիւնը սկսած է հետզհետէ ծաւալիլ. արդէն Պոլիս-թիւրքներ (յերիտասարդ թիւրքերի) խմբակները Կ. Պոլսի համաձայնական աւելի շուտով սկսած են զարգանալ եւ բազմանալ, եւ ասոնցմէ օրը 2—3 հոգի անպատճառ կը զրկուին աքսոր եւ կամ կը բանտարկուին: Թիւրքերի մէջ եղած ձերբակալութիւններն ի Պոլիս աւելի շատ են, քան թէ հայերինը: Այն զանազանութիւնը միայն կայ, որ մինչդեռ կառավարութիւնը հայերին մէջ սարսափ ձգելու նպատակով հայոցմէ ըրած ձերբակալութիւնները գաղտնի չը պահեր, թիւրք տարրին մէջ եղած ձերբակալութիւնը ամենագոյշ կերպով գաղտնի կը մնան: Ժամանակաւ կառավարութիւնը կրօնական ուսանողներէն — սօփաաներէն — երկիւղ ունէր. բայց հիմա աւելի բժկական, դեղագործական, իրաւաբանական եւ քաղաքային (միլիթէ) վարժարանաց ուսանողներէն սկսած է ահաբեկիլ: Ասոնց մէջ շատ ողջախոհ ու համակրելի երիտասարդներ յառաջ կուգան, որոնք պարզօրէն տեսնելով երկրին բարոյական ու տնտեսական քայքայումը, սկսած են յեղափոխական ուղիով ճանաչել հետեւի: Պարզ ապացոյց մ'է այդ, որ երկրին ծանր վիճակն ամեն կրթեալ եւ հասկացող մօրդը, որ ազգի ալ նա պատկանելու ըլլայ, այժմ դէպի բողոքի դէպի յեղափոխական ճամբան կուղղէ: Այդ թիւրքերն ալ շատ համակրութեամբ կը վերաբերուին դէպի հայկական խնդիրը եւ շատ անգամ զարմանալի համարձակութեամբ իրենք այդ համակրութիւնը բարձրաձայն կը յայտարարեն թիւրք աւագանիին ուղիւ: Արեւելոս ֆէյզի պէս յանունով մի բժշկական ուսանող, որը երկու ամիս միայն ունէր իր բժշկական շրջանն աւարտելու, փաշաներու ընկերութեան մը մէջ երբ խօսք կըլայ հայ կեանքներու հանրաժանօթ հստահակութիւններու մասին՝ ինչպէս մկրտած է Ալեքեան-շէյխն, քաջութեամբ յայտարարեր է թէ՛ այդ շարժումներն իրենց գոյութեան պատճառներն ու իրաւունքն ունին եւ անոնց գրգռել եւ աւելի հիմք տուողը նոյն ինքը թիւրք կառավարութիւնն է՝ իր կաշառակեր, անբարոյական, խարդախ, տրեսմար պաշտօնեաներով եւ անկարգ վարչութեամբ: Այդ անկեղծ ու արդար համարձակութիւնը ֆէյզի պէսին սուղի նստաւ. քիչ օրէն բժշկական վարժարանէն աքսորուեցաւ եւ հիմա չի գիտցուիր, թէ ո՛ր է. անտարակոյս գաղտնի կերպով աքսորած կամ ուղիւստ ինչ ըրած ըլլալու են: Շատ մը փաշաներու, բարձրաստիճան պաշտօնեաներու որդիները քաղաքական կասկածներով աքսորուած են եւ իրենց ծնողներն անկարող են որ եւ է կերպով իրենց միջնորդութիւնը լսելի ընելու կամ իրենց կսկիծը բարեկամի մը հաղորդելու: Պատանաւոր գրիլը բացարձակապէս արգիւցած է թիւրք վարժարաններուն եւ թիւրք հեղինակներուն, մինչեւ իսկ Աստուան տպագրուիլ: Այն թիւրք յայտնի եւ ծանօթ անձնաւորութիւնները, որոց ազատամտութեան վրայ կասկածներ կան եւ որք սակայն եթէ աքսորուելու ըլլան՝ ընդհանուրին ուշադրութեան առարկայ պիտի ըլլայ իրենց բռնի բացակայութիւնը, կը զօգուին Պետական Խորհուրդը, դրա ան գործ նստելով՝ ամիսը 8000 զուռ կըստանան: Կառավարութիւնն այդ զմտանգաւոր մար-

դիկն այս կերպով սկսած է սիրաշահել... Այժմեան Պետական խորհուրդը կազմուած է մեծ մասամբ զբաղ-
գոհներէ, ազատամիտներէ, գրիչ շարժողներէ եւ ան-
հնազանդ տխմարներէ — բոլորն ալ առաջ բարձրաս-
տիճան եղած են: Այդ Պետական ըսուած խորհուրդին մէջ
ինչ է ատենց գործը. յիրաւի Պետական խորհուրդ
մը կը կազմեն եւ քաղաքական գործերու ղեկավարու-
թեան մէջ մաս ունին... Ի հարկէ, ոչ այդ մարդոց պաշ-
տօնապէս եւ խստիւ ըսուած է հետեւեալը. յերապական
թերթերուն մէջ բան չը պիտի գրէք ամենեւին, քաղա-
քականութեան մասին ոչ ինչ պիտի խորհիք եւ ոչ ալ մե-
կու մը բան խօսիք: Կերէք, խմբէք, պատիւ ու մեծա-
րանք վայելեցէք, ձեր քէյֆը նայեցէք եւ սուլթանը պի-
տի ձեզ սիրէ եւ ձեզի ամսէ ամիս ճշդութեամբ եւ
կանոնաւորապէս 80-ական ոսկի կուտայ: Թէ մէկ եւ
թէ միւս կողմէն ալ այդ բոլորն ամենայն ջերմեանով ու-
թեամբ կը գործադրուին: Կեցցէ բռնութիւն, կեցցէ օ-
տարակերութիւն...

ԿԱՅԻՆ

Կ Ի Լ Ի Կ Ի Ա

*** 7 ապրիլ 1893

Այս ձմեռ կառավարութիւնը կրկնապատկեց իր խոս-
տութիւններն ու հսկողութիւնները Կիլիկիայի բոլոր կող-
մեր: Կառավարութիւնը սարսափելի երկիւղի մէջ է, որ
մի գուցէ Կիլիկիայի մէջ եւս պատահին խռովարարական
գէպքեր, ինչ որ այսօր Հայաստանի եւ Փոքր-Հայքի ա-
ռօրեայ օրակարգը կը կազմեն: Այդ տեսակ գէպքերու
տեղի չը տալու համար չի խնայեր ոչ մի մերենայու-
թիւն Կիլիկիայի հայերի վրայ. մանաւանդ երկու գլխա-
ւոր միջոց. 1) նիւթապէս բոլորովին քայքայել հայերը.
2) զբոսել քաղաքային եւ գիւղական տաճիկ խուժա-
նը, մի բան, որ կապացուցանէ թէ կառավարութիւնն
այլ եւս մօտեցած է պարտութեան ճգնաժամին:

Այս անգամ կը պատմենք Կիլիկիայի ծովեզեր-
եայ գիւղերու ու քաղաքներու վրայ կառավարութեան
ձեռք առած խստութիւններն ու հսկողութիւնները:

— Կառավարութիւնը վախնալով Հայ-Արեւան հայե-
րի ստուարութենէն՝ մտադիր է հիմնել Չոր-Մարդուան
զուտ հայաբնակ գիւղի մէջ կառավարական մի սէրայ,
որ պիտի նստին բաւական քանակութեամբ զօրքեր ու
պաշտօնեաներ: Գոցա համար սահմանուած են գիւղացի-
ների վրայ 100 ոսկիի մի գումար: Ասկէ երեք շաբաթ
առաջ Փայասի ակըսկալը, կօմիսէրն ու հարկւարապետը
18 ոստիկանով դնացած են գիւղացիներէն այդ դրամը
գանձելու համար: Օճախընի մէջ, որի ազգաբնակչութեան
կէսը հայ է եւ կէսը թիւրք, տաճիկ ամբողջ կը խուժէ
տեղակալի վրայ պողտով, պողպատով, որ յմենք այլ եւս
սնանկացանք, մենք այլ եւս ոչնչացանք. երբէք այդ դրո-
մը չենք կարող վճարել: Տեղակալը վախնալով թիւրք
ամբողջի այդ զօրքեալ ցոյցէն, առանձին ներս կը հա-
ւիրէ Օճախընի, Չայի եւ Էրզնի տաճիկ ազաները, գիւ-
ղապետները, խոճաներն եւ, այսպէս ըսուած, կատաղի է-
ֆէն եւ ըն ու հաշէշն եւ ը — սրիկաների դասա-
կարգ. — ապա խիստ կերպով կը յանդիմանէ եւ կը հայ-
հոյէ գոցա. յետոյ քաղցրութեամբ կըսկսի խրատել.

«Տղաքս, հայկական խնդիրը հիմակ ծանրացաւ, հայերը
պէտքութիւն կուզեն. թող Աստուած մեր սուլթանի սու-
րը կտրուկ ընէ... (Ալլահ, սուլթանըն գըլըճընը քէս-
կին էյլէսին...) բայց տեսնելով որ այստեղի հայերը
շատ են եւ ազդըն (կատաղի), այստեղ մի վտանգաւոր
տեղ է, հետեւապէս մեր թագաւորը ուզեց, որ այստեղ
չինկեք այդ զօրանոցը, որպէսզի հայերի գէմ պաշտպա-
նէ ձեզ եւ հակառակ պարագային ալ աջակցէ ձեզ» —
ի հարկէ կոտորելու մէջ: Յետոյ կըսկսի յորդորել. «ոչ
միայն դուք սիրով տալու էք այս գրամը, այլ ձեզ պաշտ-
պանելու համար միշտ արթուն կենալու էք եւ զէնքեր
գինելու էք... Յետոյ խօճաներուն ու գիւղապետներուն
առանձին առանձին խիստ պատուէրներ տալով հայերի
մասին, բոլորին ալ ճանապարհ կը դնէ: Տեղակալի այս
ընթացքը ամբողջ մեծամասնութիւնը գրգռեց. բայց կա-
յին թիւրք երիտասարդներ, որոնք ցաւ կը յայտնեն հա-
յերին, որ իրենց սնանկացնողը ոչ միայն կառավարու-
թիւնն է, այլ իրենց մէջ թշնամութեան որոմը ցանու-
ղըն ալ կառավարութիւնն է...»

Իսկ խեղճ հայ գիւղացիները առանց մի փոքրիկ
ընդդիմութիւն ընելու իսկ, պահանջուած գրամի մեծ
մասը իրենք վճարեցին: Դոյն օրը տեղակալը կը կանչէ
նաեւ Չոր-Մարդուանի աղաներին եւ կըսկսի խիստ կեր-
պով խօսել. «հայկական խնդիրը խիստ կերպով ծանրա-
ցաւ. այստեղ գօմիթաճիւն եւ կերթան ու կուգան
եղեր. զգոյշ եղիք, մի հաւատաք այդ տեսակ սրիկանե-
րի խօսքին. վերջը դուք կերթաք օխայի ներքեւ. եթէ
գիտէք այդ տեսակ գօմիթաճիւնների տեղը, կամ դուք
բռնեցէք եւ մեզ ուղարկեցէք եւ կամ մեզ իմաց տու-
էք տեղը, մենք կերթանք կը ձերբակալենք: Խեղճ ա-
ղաները լինչ կարող էին անել ի հարկէ կուրանան ի-
րենց չը գիտցած ու չի տեսած բանին համար եւ կը
յայտարարեն թէ, «մեր աղքատ գիւղացիները զբաղուած
են լոկ իրենց հացը ճարելու»:

Տեղակալի խօսքի վրայ, չենք կարող չը յիշել նա-
եւ Մարաշի փաշայի գօմիթաճիւններէն կրած երկիւղը, որ
յայտներ էր հայ աղաներին, մօտաւորապէս երկու ամիս
առաջ. «երբ տունս, շուկան կամ պաշտօնատեղիս կեր-
թամ, հաստատապէս կընամ ասել, թէ՛ ինձ հանդիպած
բոլոր հայերը, այդ Հնչակեան ըսուած ընկերութեան
«Փէ տաիւներէն» են (անձնազօհներէն), բայց ձեռքիս
մէջ գեռ փառտեր չունիմ. այո՛, այդ ընկերութիւնն է, որ
մի մեծ պատերազմէ մը աւելի վնաս հասոյց մեզ... Դ
Մի երկիւղ, որ կառավարութիւնն ունի Կիլիկիայի բո-
լոր քաղաքների ու գիւղերի վրայ, ամենքն ալ յեղա-
փոխական կարծելով:

Իսկ պահականոցի համար, տեղակալը կը յայտնէ հա-
յերին թէ. «մենք միշտ մեր աչքին պէս ձեզ պահել
կուզենք, որ մեր գլխ առաւ սուլթանը շինել պիտի
տայ այդ պահականոցը յսերայը... Ինչ ծիծաղելի կա-
տակերգութիւն:

Միեւնոյն ժամանակ կառավարութիւնը այդ տե-
սակ գողութիւնների հետ, մեծ խստութեամբ կը խլէ
հայ գիւղացիներէն ու քաղաքացիներէն, ծանր զրկանք-
ներով վաստակուած հացը, — կերակուրի ամաններն
իսկ ծախելով, տասը տարի առաջ անյայտ մնացած
տուրքերն իսկ կը դանձէ:

Տեղակալի հետ եկեր է նաեւ իթափու մէմուլ

ր ի նս (հողերու տնօրէն), և սկսեր է խտտութեամբ ժողովել յի ն թի գ ա լ իս (փոխանցման) մի նոր տուրք: Կառավարութիւնը իր սնանկութիւնը գոցելու համար հայ գիւղացիներու ունին-չունին չի ուզեր մտիկ ընել: Ահա այդ նոր տուրքն ալ. — որի, որ հայրը մեռեր է 1, 10, 20, 30 եւն տարի առաջ գորա կալուածի որդիին փոխանցման համար, որդիէն մի մեծ տուրք առնել: այսինքն հօրը ապրանքը որդուն ծախել. . . նոյնն է նաեւ եթէ մէկէն կալուած է գներ այդ փոխանցման համար տուրք առնել ոչ միայն գնողէն՝ այլ և ծախողէն, մինչեւ իսկ 4—5 ծախողէ միաժամանակ, եթէ կառավարութիւնը երկար տարիների ընթացքով լուր չէ ունեցեր առեւտուրէն: Այսպիսով, մինակ օձախը գիւղի 300 տուն հայերէն 150 ոսկի ժողովել է. անոնցմէ, որոց հայրը որջ եղած ժամանակ չի մարգարէանալով ապագայ խնտութիւնները, չէր փոխանցած որդուն վրայ. մարգարէութիւն ամենաքիչը 2-300 դահեկանէն վար վճարող չըկայ: Այս տուրքը լոկ հայերէն են առեր: 2ը մոռնանք ըսել նաեւ, որ կառավարութիւնը այդ կալուածներու թէ արդիւնաբերութեան տասանորդը կը ստանայ ամեն տարի և թէ կալուածի յի թ է մ է թ իւ ըս, — տէրունական վարձը: Եւ իրականը ունի կառավարութիւնը. . . չէ որ հայերս վարձուորներ ենք տաճկաց հողի վրայ. սա ալ ճորտութեան մի տեսակը չէ. . .

Կառավարութեան շինուած խճուղիները (chaussée) հայ գիւղացին ձրիապէս շինելէ յետոյ, ամեն տարի ալ տուրք կը վճարէ համապարհի փողս անունով որ համեմատաբար ամենէն աղքատը կը վճարէ 15—20 դահեկան. ատկէ զատ ամեն ժամանակ, որ գիւղացին քաղաք կերթայ, մէկ անասունի համար փ ա ճ կը վճարէ 40 փարա որջ ստակ: Շինուածներէն զատ, վերոյիշեալ գիւղացիները չը շինուածներու համար ալ կը վճարեն. մինչդեռ ծանօթ է ամենքին թէ՛ ինչ գէշ եւ քարքարուա ճանապարհներ ունին, և ձմեռ ժամանակ երթելու եղութիւնը կը խզի, առեւտուրը կը կասի, բազմաթիւ յորդած՝ անկամուրջ գետերի պատճառաւ, որոնք առնուազն 20—30 մարդ կուլ կուտան:

Այժմ մի տարօրինակ տուրք ալ սահմանուեց, յի թ փ ր ա խ պ ա ս տ ը փ ա ր ա ս ըս (հողը-կոխելու ստակ): Մարգարէութիւն 50 փարա կառնեն, մինչեւ իսկ երկու ժամ հեռաւորութեամբ մի քաղաքից միւս քաղաք գնալու համար: Ահանջը խօսէ. Նասրատտին խօսարի. եթէ ոյս ժամանակիս ապրած լինէր ի՞նչ կանէր. — թերեւս ոտքին խոշոր սանդուխ մը շինել կուտար. . . հողը չը կոխելու համար:

Բայց այս տուրքը հայերիս պէտք է պատիւ բերէ. չէ որ այլ եւս կառավարութեան հպատակ, հաւատարիմ ծառաները լինելէ գաբրեցանք. . . լաւ է, որ կառավարութիւնն այլ եւս մեզ մէկ օտար ազգութեան տեղ կը դնէ:

— Տեղական գնալէն յետոյ տաճիկ խոճաները համարձակօրէն կը քարոզեն Էրզրոմի մզկիթներուն մէջ Էրզրոմի, որ Եֆէնդէրիներից մնացած տաճիկ աղագանակութիւն ունի. հով որ հայն իր տունն ընդունէ իբր հիւր, նա պիղծ է. ով որ հայի հետ ընկերանայ, նա պիղծ է. հայի ապրանքն ու պատիւը հալալ է միւսելու մանին. . . եւն: Այդ օրերէն երեք օր չէ անցած, Էրզրոմի տաճիկները ետ ճանապարհ դրեր են իրենց հայ ա-

ռեւտրական օր թ ա խ ներն (ընկերներն), յայտնելով, որ, ինչ ընենք, թէպէտ մեզ փեսս կը հասնի, բայց մեր խօճաներու պատուէրն այս է. . . — կառավարութեան պատուէրն այդ է, և դեռ պէտք է կասկածիք, որ միւս պատուէրներն ալ չը պիտի գործադրուին. . .

Այդ օրեր 2օք-Մարգուանցի մի հայ, Մովսէս անուն, իր տաճիկ ընկերոջ հետ Էրզրոմ կերթայ. կէս օրուայ գէմ լինելով տաճիկ ընկերը կը պնդէ, որ մզկիթի առջևի փողոցէն անցնին, որպէսզի ինքն աղօթէ: Երբ մզկիթի առջևը կը հասնին, տաճիկ սրիկաները կատաղած՝ անպատմելի հայհոյանքներ ու լուտանքներ կը տեղան հայի ազգութեանը, կրօնքին ու պատուոյն վրայ. մարդը կը շուարի և կը խնդրէ, որ ցոյց տան և իրենց ցանկացած ճանապարհէն երթայ: Պնդողի վրայ գնալ, բնաւ մի գընար, մի անցնիր մեր գիւղէն՝ և կրկին կը շարունակեն իրենց յիշոցները: Սրիկաներու մի խումբը դէպի վար կը քշէ հայի գրաստը, միւսը դէպի վեր. կէս ժամ այսպէս անպատուելէ և խիստ ծեծելէ յետոյ՝ խեղճ հային, իր թիւրք ընկերոջ խնդրանքով մի նեղ պատի մէջէն կանցնին, ուր գրաստի համետը կը ջախջախուի:

Պնդողի մոռցեր ասկէ աւելի մի թշնամական ցոյց, որ քանի մը ամիս առաջ թիւրքերը ըրին Էրզրոմի մէջ: Մի հայ՝ Խաչեր անուն, որ Էրզրոմի շուկայի մէջէն կանցնէր, այդ հրապարակի վրայ ցորեկ ատեն, ահագին բազմութեան առաջ, Էրզրոմի խօճան, վեցհարուածը կուղղէ հայի կրծին. բարեբաղդաբար գնտակը կը վրիպի: Երբ թիւրքերը կը հարցնեն թէ, ինչո՞ւ, այդ ի՞նչ էր, որ արիւն: — Պատն մը չէ, վեցհարուածս նոր առի, կուղծմ փորձել թէ կեամբուրի կուրծքը կարող է ծակել: Կը պատասխանէ. . . Երբ շունը այդ ոգւով վառուած լինի, ի՞նչ կը լինին անոր լակոտները, մանաւանդ երբ ունին կառավարութեան քաջալերութիւնն ու օգնութիւնը:

— Անցեալներս դեռ նոր ելաւ Ատանայի բանտէն Օձախընի գիւղապետ հաճի Գրիգորը. սա բանտարկուած էր որպէս յեղափոխական: — Ոստիկանները Օձախը կուգան տուրքերը գանձել: Անլուր հայհոյութիւններով կը ծեծեն հայ գիւղացիներ գրամ առնելու համար. հայերը կը գանգատուին: Հաճի Գրիգորը ոճիր կը գործէ յայտնելու ոստիկաններուն առաջ այդ հայերուն թէ՛ հսպասեցէք երեք օր եւս և կազատուիք այս ոստիկաններէն, որովհետեւ այդ երեք ոստիկաններու գէմ միշտ ամբաստանութիւններ եկած լինելով, երեք օրէն տեղափոխուելու հրաման եկած էր: Այս խօսքի վրայ ոստիկանները սաստիկ կատաղած, կերթան կամբաստանեն հաճի Գրիգորին կառավարութեան առաջ իբր յեղափոխական, որ գրգռեր է հայերին յայտնելով, թէ «սպասեցէք, երեք օրէն ապստամբութիւն պէտք է լինի և հայկական կառավարութիւնը պիտի գայ»: Խեղճ գիւղապետը երկու ամիս Ատանայի բանտին մէջ տանջելէ յետոյ 15 ոսկին առին եւ ազատ արձակեցին:

Երկու շաբաթ առաջ ալ 2օք-Մարգուանցի ոստիկանը, մի փոքրիկ թշնամութենէ դրդուած կամբաստանէ նոյն գիւղի սասունցի հայ հացագործի մը, որպէս թէ շինած հացը դառն է, եւ կըսկսի ծանր հայհոյանքներ տեղալ հային: Հացագործը չը դիմաւորուի այդ անպատուութեան, ոստիկանին կը պատասխանէ թէ իրաւունք չունի հայհոյելու: Հացագործի այսքան համարձակութեան վրայ կատաղած՝ կը յարձակի իր ընկերներ-

րով հացագործի խանութին վրայ եւ կըսկսին սաստիկ ծեծել: Այդ անբաւական լինելով կը քաշկռտեն, կը տանեն պահականոց, ուր պառկեցնելով սաստիկ կը գանա-կոծեն ու կը խարաղանեն: Հայերը կերթան եւ կիսամեռ վիճակի մէջ կաղատեն հացագործը, որ նոյն օրը կերթայ՝ անասունի վրայ բեռցուած՝ բողբոջ փայտի տեղակալին, այսինքն գայլի դէմ բողբոջ արջին: Ոստիկանը նոյնպէս փայտա կը կանչուի, բայց երեք ժամ չանցած ետ կը դառնայ ծիծաղելով: Իսկ հայը, երկու օր յետոյ:— Գոհ թող լինի այդ հայն, որ երկու ամիս չի մնաց փայտի բերդին մէջ... իր յետադարձական ընթացքի համար:

Ասկէ մօտաւորապէս երեք շաբաթ առաջ ալ, Էրզնի մէջ մի խօծա, երեւի մտային խանգարում ունեցած լինելու էր, կեղծ եւ համարձակօրէն կը քարոզէ մզկիթի մէջ. «Ով միւսլիմաններ, Մուհամմէտը կը գրէ իր զօրանի մէջ, որ 1270—այժմ տաճիկների 1310 թւականն է—թւականէն յետոյ եկած միւսլիմանները, միւսլիման չեն համարուիր և չեն իմ որդիներս, այլ քեռաֆիք ը-ք ի-լ-ֆ էրա — կեաւումներէն կեաւումը — կը համարուին. հետեւապէս այլ եւս մեր ժամանակը լրացած է եւ մեր ապրածը աւելորդ. հարկաւոր է ուրեմն, որ ասկէ յետոյ ընդունինք բրիտանական մեղաւելի յարմար կրօններէն մէկը: Ինչ նորութիւն... Այս նոր առաքելին, նոր Պօղոսին, որ պատուէր ունէր կոտորել կեաւումներին, ընդհանապէս կեաւում լինել կը հօւսերէ, շուտով քրիստոնեայ մկրտեցին... Ի հարկէ Միջերկրականի կապոյտ ալիքների մէջ:

Պէշլանի շրջականներն ալ կառավարութիւնն իր խնստութիւնը սաստկացուց: Բաժանի տնին, սուլիակիր զինւորները թափառեցին հայերի թաղերը, վախնալով որ հայերը տաճիկների մզկիթը պիտի կոխեն եղբւր:

Անցեալ օրեր քիլիսի եւ Հալէպի ճանապարհի վերայ չէրքէլ աւազակները ռզդոպեցին, «էվգաֆ նազըրին» — կալուածների տեսուչը, — որ խկէնտէրունէ Հալէպ կերթար: Ախրաւորներ են տեսնել եւ առեր սորա 180 ոսկին: Կառավարութիւնը փոխանակ աւազակները բռնելու կամ այն կողմերի տաճիկ գիւղերի վրայ ծանրացնելու հսկողութիւնը, Պէշլանի շրջականները խտացուց: Խկէնտէրունէ մէկ ժամ հետի, Արաբ-Ալի ասած տեղը, Պէշլանի ճանապարհի վրայ, շինք է մի պահականոց, ուր կսպասէ 5 հեծելազօր եւ 2 հետեւակ. ատոնցմէ մէկ հատը շինուած կար Պէշլանէն մի ժամ անդին, այժմ երկու հատ եւս աւելացուցեր է, մէկը Թօփ-Պօղազի ասած տեղը, միւսը Ղարա-մուրա-Խանի մօտերը, Անտիոքայ ճանապարհի վրայ: Արդէն այս երկու տարուան մէջ, այդ տեսակ պահականոցներէն 8-9 հատ շինք է կառավարութիւնը Զոք-Մարգուանի շրջակայքը, մի ժամէն մինչեւ հինգ ժամուայ հեռաւորութեամբ: Եւ այս բոլորի նպատակն է ոչ թէ գողերը բռնելու — որովհետեւ ինքն ալ մի գող է — այլ յեղափոխական, քանի որ այդ տեղեր աւելի շատ հայաբնակ են:

Կառավարութիւնը Պէշլանի հայերի թաղին մէջ շինեց երկու պահականոց եւս, որոնք գիշեր ցորեկ կը նեղեն անցուդարձ անող հայերին: Այս բոլոր պահականոցների նպատակը իմացուեցաւ. — կայսերական հրաման եկեր է խիստ կերպով, ով որ զինուած կերթայ

ճանապարհէն, ոստիկանները պէտք է հարցաքննեն ճանապարհորդին, իր ով լինելն ու զէնք կրելուն պատճառը, եթէ վնասակար լինի, իսկոյն պէտք է ձերբակալեն: Իսկ եթէ ճանապարհորդը չանսալով ոստիկանների, առանց հարցման պատասխանելու մէկի, ոստիկանները իրաւունք ունին զարնելու ճանապարհորդին... Այսպէս կառավարութեան վախը Վիլիկիայի երկիրը կատարեալ պատերազմական դրութեան մէջ կը գնէ օր օրի:

Այս օրեր Հալէպէն խկէնտէրուն հասաւ, Սիւլէյմանի է քաղաքի հռչակաւոր շէյխ Սալիտէ-Ֆէնտին (Սիւլէյմանիէն Տիգրանակերտէն Մուշ գնացող ճանապարհի մօտերն է): Կայսերական հրովարտակա Պօլիս կը կանչէ սուլթանը այդ նոր ջէլալէտօինը, որ ունեցեր է 85,000 քիւրդ աւազակ հրացանակիրներ: Սուլթանի հրամանաւ կուսակալներն իրենց կանուանեն սորա առաջ՝ իր ծառայն. որովհետեւ սա փօստնի շին է (մարդարէի նուիրական փօստի վրայ նստող): Երբէք չը ցանկար հայի երես տեսնել. հայ սրճագործին եւ հայ խոհարարին վնտեր է խկէնտէրունի մէջ եւ կանչել առէր է տաճիկ աշտին: Յատուկ շոգենաւ յատկացուեր է իրեն Պօլիս երթալու համար... Գժուար չէ գուշակել Համիտ Հաւուշի նպատակը... մեր սասունցի կորիճ եղբայրների վրայ մի նոր ջէլալէտօին է հարկաւոր:

Խկէնտէրունի մէջ այս երկու ամիս է, սաստիկ հրսկողութիւն կեցեր է մաքսատան մէջ: Աթէնքի լրտեսական խմբերը, երեւի այնտեղի որսերէն բոլորովին դատարկաձեռն, իմաց են տուեր Պօլիս, որ տեղէն ալ խկէնտէրուն խիստ հեռագիրներով ծանուցեր են, որ «Հընչակեանները Աթէնքէն, խկէնտէրունի ճանապարհով պատերազմական ռազմամթերք ու զէնք կը փախցունեն!! Բոլոր ապրանքի հակերը, մինչեւ իսկ ծրարները կը քակեն մաքսատան մէջ: Մի մեծ ժամանակի կորուստ եւ բաւական ծախք վաճառականների համար... Խեղք կը տայինք սուլթանին, որ միանգամ ընդմիշտ ազատելու համար այդ տեսակ մտածումներէն, հրամայէր, որ ծովը ձրգէին հակերը. միանգամէն ապահով կը լինէր, որ գոնէ զէնքերն ալ ապրանքների հետ ծովը կերթան...

Կառավարութիւնը զէնք կը փնտռէ եւ նոր կայսերական օրէնքով խստիւ կարգիլէ զէնք կրելը, բայց չի մոռանար նաեւ նուիրել զինւորութեան վերադարձողների՝ մէկ-մէկ զոյգ հրացան (չիֆթէ) եւ մի-մի վեցհարուած... որ ամեն օր եկածների վրայ կը փայլին Վիլիկիայի բոլոր կողմերը, հայերին կոտորելու համար տրուած հրահանգներին հետ:

Խկէնտէրունի մէջ վեց ամիս է ի վեր կըսպասէին ամերիկեան քաղաքացի եղած, երկու տիգրանակերտցի հայեր, որոց չէր թոյլատրուիր Ամերիկա երթալ: Երկար բողբոջներէ յետոյ, ամերիկեան կառավարութիւնը իր Պօլիսի դեսպանի միջոցով կտրպէ սուլթանին, որ թոյլատրէ այդ հայերի Ամերիկա մեկնումը, հակառակ պարագային կըսպանայ ուղարկել մի մարտանաւ:

Սուլթանը հեռագրով հրամայէր էր, վոնաւ այդ հայերին, առաջին հանդիպած շոգենաւով: Այդ օրը Էրաթիական շոգենաւ եկած լինելով մէկ վայրկեանի մէջ առանց հաց գնել տալու, կը քաշկռտեն եւ խանի անկիւնէն մինչեւ շոգենաւ կը տանեն այդ խեղճ հայերը:

Այս գէպէն մի շաբաթ յետոյ եկաւ ամերիկեան

Հսկայ մարտանաւ մը: Այդ զրահաւորէն արձակուած հարկւրաւոր թնթանօթներէ ձայները կորոտային ահեղ որոտի նման հայ-լեռներէ մէջ: Քաղաքացի եւ գիւղացի տաճիկները սաստիկ վախեցան եւ այդ օրեր միայն սկսեցին կռիւ հայերէն «էրմէնի» եւ ոչ կեսաւոր: Իսկ խեղճ հայերը ոսկի երազով օրօրեցին իրենց. ուղեցին մի վայրկեան նշմարել աւետեաց երկրի փրկութեան լոյսը. . . բայց չուշացաւ հիասթափութիւնը: Հոգեհաւը, որ իսկէնտէրունէ յետոյ նոյն ցոյցն արաւ Ե ու լ ու ռ - թ ա լ Ը գ ի եւ Մ է ր ո ի ն ի առաջ, մեկնելէն մի քանի օր վերջ տաճիկ ժողովուրդը սաստիկ կատաղեց արեւնածարաւ գայլերի պէս եւ հաստատապէս այս անգամ համոզուեց իր խօճաների եւ տեղակալների խօսքին, որ — իրաւ հայերը պէյութիւն կուզեն եղբոր:

Այս դէպքէն ութ օր յետոյ Հալէպէն կը գան իսկէնտէրուն, որպէս քննիչ մասնաժողով Վիլհիլմիյն յայտնի բարբարոս Ալայ բէկը եւ կուսակալի որդին, զէնքեր եւ յեղափոխականներ փնտելու համար: Այդ «քննիչները» իրենց ձեռքին ունեցեր են անունների մի ցուցակ, որ ամբողջ իսկէնտէրունի ժողովուրդը կը պարունակէ, ամեն դասակարգէ, ունեւոր, արհեստաւոր, կղերական, աղքատ:

Հայերէն մի քանին կը կանչեն. կը հարցաքննեն երկար ժամերով եւ կը պնդեն, որ ճշմարտը խոստովանեն, «թէ, որոնք են յեղափոխականները եւ ինչ միջոցով կը ստանան զէնքերը, ուղղամթերքը, թերթերը եւ այլն»: Յետոյ կը սպառնան, որ զգոյշ լինեն. «եթէ մէկ անգամ բռնուէք, ալ ազատելիք չունիք. ձեր ոչ Մարկոսը եւ ոչ ալ Վիրակոսը չը գար ձեզ տէր լինել. բանտի մէջ կը փոտէք յսկիտեան»: Բայց իրենց կասկածների ոչ մէկի ստուգութիւնը չը նշմարելով իսկէնտէրունի մէջ եւ վախենալով, որ տեղի կտան գուցէ մէկ անախորժ գէպքի, կը յայտնեն, որ «մենք իրաւունք ունենք այս մարդիկը ձերբակալելու եւ խուզարկելու, բայց չենք ուզեր այժմ կատարել այդ արիւնք գործը»: Կը շտապան մի քանի լրտեսներ կարգել, որպէսզի աշխատին ստուգել իրենց կասկածները եւ տեղեկացնեն իրենց: Յետոյ կը մեկնին:

Ստուգիւ կառավարութիւնը կը վախէ գիւական մի վախով ոչ միայն Ամասիայի կատուներէն, այլ եւ Վիլհիլմիյի մացառներէ, որոնց շարժումները մի շիւ նայուածքով կուզէ յեղափոխականների եւ ասպատակների շարժում նկատել. . . .

Այդ տեսակետով մենք շատ գոհ ու շնորհակալ ենք կառավարութենէ, որ մեզմէ աւելի փոյթ կը տանէ մեզ ընկերներ ու համախոհներ պատրաստելու մասին: Կառավարութիւնը Վիլհիլմիյի մէջ ալ ինքն իր ձեռքով իր անասելի խստութիւններով, վստահ ենք, որ պիտի պատրաստէ իր վախցած սարսափելի որոտը. . . . Ի հարկէ մէկ օր իր գլխին պայթեցնելու. . . .

ՏՈՐՈՍՅԻ.

ՅԻ ՆՊԱՍՏ ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՎԱՆՔԻ՝

«Մշակի» Nr 35-ի մէջ կարդում ենք կոյս Հռիփսիմէ Թայիրեանի երկողջը, որով նա յայտնում է, թէ յիւ խնդրելի համաձայն՝ Կաթողիկոսի շարքաւոր (sic) կօնդակով, Թիֆլիսի կօնսիստօրիայից ստացած մի ժապաւենեալ մատնանով՝ հանգանակութիւն է աւել յի նը-

պաստ Երուսաղէմի վանքի: Եւ ապա կոյսը յՄշակի՝ խմբագրութիւնից յինգրում է խոնարհաբար հրատարակել նուիրատուների ցուցակը, ինչ յՄշակը՝ խորհրդաւոր կերպով մերժում է յտարաբաղդաբար: Այսպէս, Կաթողիկոսը, որ իր վերջին կօնդակի խօսքով իբր թէ յայժմ միայն աղքատների մասին է մտածում, փոխառէն սովեալներին յատկացնելու ժողոված գումարները եւ այդ թշուառների համար հանգանակութիւն բանալու, իր հովանաւորութիւնն ու յօժարութիւնն է տալիս այնպիսի մի հանգանակութեան ձեռնարկի, որի հաղորաւորութիւնները պէտք է գնան Երուսաղէմի անյատակ տակաւոր: Այդ վանքը, որ իր անհեթեթ, անվերջանալի, խոշոր պարտքով այնքան տարիներ ծանրացաւ հայ ժողովրդի վրայ առանձին տուրքի ձեւով եւ այնքան կլանեց իր զգային դրամ, այսօր վայելում է Կաթողիկոսի ձեռնաւորութիւնն եւ մասնաւոր շարքաւոր կօնդակների աջակցութիւնը: Եւ այդ բարձր հովանաւորութեան շնորհով էլ, ուրեմն, այդ վստահամբաւ վանքը պէտք է շարունակէ օտարակերի պէս ծծել հայ ժողովրդի արիւնը եւ աւելի ձոխցնել իր՝ արդէն արքայապետել ճաշի սեղանը, վարելով միշտ մէկ անգործ, անբարոյական, ասիական կեանք:

Ա.

ՍՈՒԼԹԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ՍԽՐԸԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԱԹԷՆՔՈՒՄ

Յիւրաւի, սուլթանի կառավարութեան գործերն Աթէնքում շատ վատ են գնում: Այդ հիւանդ մարդն, այդ բարբարոս թշնամին արդէն բոլորովին սովորական է դարձրել իր անընդհատ հարցապնդումները հելլենական կառավարութեան՝ յՀնչակի՝ եւ Հնչակեան Կուսակցութեան Կենտրոնի Աթէնքում հաստատված լինելու նկատմամբ: Բայց այն մշտական մերժումները, որ հելլեն կառավարութիւնն է անում Հնչակեաններին Յունաստանից արտոնելու առաջարկի մասին, այդ բանն առաջարկողի, սուլթանի կառավարութեան, քիթը խիստ երկարացրել է: Դաս բնական է, ի հարկէ: Բայց թիւրքը մէկ-երկու անգամ փորձեց մէկ ուրիշ ձեւով արգելք դառնալ յՀնչակի՝ հրատարակման. գողանալ տվեց մեր տուրքից բաւական բանակութիւն: Բայց դրա առաջքն էլ առնվեցաւ:

Այդ ողորմելի անաջողութիւններից, վերջապէս, ձանձրացած ու կատաղած, աւաղակ կառավարութիւնը վերջերս մտածեց գործադրել մեր դէմ մի միջոց՝ լեռնային աւազակների եղանակով: Սուլթանական հայ, թիւրք լեռտեսներն արդէն վաղուց է, որ հիմնած ունեն այստեղ իրանց կենտրոնական ուղերից մէկը: Ահա իր այդ լրտեսների միջոցով էր, որ նա ուզում էր գործադրել մեր դէմ աւազակային մի միջոց, որ հետեւեալն էր: Շնորհով տեղիս Հնչակեանների աշարժութեան՝ կարելի եղաւ երեւան հանել մի լրտեսային դաւադրութիւն լեռնային լարված յՀնչակի՝ խմբագրապետի կեանքի դէմ: Այդ սպանութեան գործը պէտք է կատարվեր մի հայ եւ մի թիւրք լրտեսների ձեռքով եւ իբրեւ վարձատրութիւն մարդասպանը պէտք է ստանար 100 օսման. ոսկի: Հոյ լրտեսասպետի անուն է Նազարէթ Իշխանեան, զէյթունցի, որ լրտես լինելու մասին արդէն տարիներ առաջ գրված էր յՀնչակում: Այդ գաղտնի դաւադրութեան մասին իմաց տվինք տեղիս ոստիկանութեան, որ անմիջապէս ձերբակալեց Իշխանեանին, իսկ միւսը աջողեց խոյս տալ, մեկ-

նեղով Աթէնքից: Ոստիկանապետը մեր պահանջի համեմատ, ամենայն պատրաստակամութեամբ որոշեց արտաքսել լըտեսսին Թունաստանից և բոլոր միւս լրտեսներին խիստ հսկողութեան տակ պահել: Բայց տեղիս թիւրքական զեւսականատան կողմից խնդիրք ու երաշխաւորութիւն տրվելով (սուլթանի գեսպան — լրտեսի երաշխաւոր), իշխանեանին արձակեց բանտից, այն խիստ պայմանի տակ, սակայն, որ եթէ մեր կողմից դարձեալ պահանջ լինի նրան և կամ որ եւէ ուրիշ լրտեսին արտաքսելու, ոստիկանապետն այլ եւս իր պարտքը կը համարէ անուշադիր թողնել զգեսպանատան լրտեսապետական երաշխաւորութիւնը եւ կատարել այդ պահանջը: Թիւրքական տեղիս գեսպան Գաբբան բէյը, որ նշանաւոր էր իր աւագակային բարքով ու խոշոր կեղծքով, վերջերս կոչված լինելով Կ. Պոլիս, այդտեղ յանկարծակի (?) մահով մեռնում է: Այդ մեծ մարդը մեռաւ, այդպիսով առանց հասնելու իր փափագին:

Յոյն հասարակաց կարծիքը խիստ զայրացած է թիւրք կառավարութեան այդ մեքենայութիւնների դէմ եւ համակված անկեղծ համակրութեամբ դէպի Հնչակեանները:

Յիրաւի, սուլթանական կառավարութեան գործերը շատ կաղուկ են Աթէնքում: Թող նա իր ճանկերը լաւ սեղմէ իր ձեռքում. նրանք շատ անփնաս են Աթէնքում Հնչակեանների համար: Եւ թէկուզ նա իր մարդասպաններին է ուղարկում մեր դէմ, բայց մեր չարութեամբ մենք միշտ խոսեցարում ենք նրա բարի... դաւերի գործադրութիւնը եւ ապա կուշտ ծիծաղում նրա վրայ: Այո, անշուշտ, այդ կառավարութիւնն ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ շատ... տխուր: Մենք ծիծաղում ենք...

ՈՅԱՆՑԻՑ

ՄԷԿԻՆ, ՈՐ ԻՐ ՉՍՓՐ ԶԷ ԺԵՆԵՐՈՒՄ

Եւր տեսանելի եւ անտեսանելի, երեւելի եւ աներեւոյթ հակառակորդներն, անտարակոյս, մէկ առանձին զգուշի հաճոյք են զգում շարունակ կատաղաբար յարձակվել մեր վրայ. երեւի ուրիշ ոչ մի գործ չունեն: Ոմանք գաղափարի իւր անհամաձայնութեան տակ, ոմանք տարտիվական, ջիզուխտական վերաբերում գցած իրանց վրայ, միւսներն իմաստակի ու կեղծ բարեկամի դիմակի տակ — եւ այդ ամենքը՝ դրված իրանց կրքերով ճգնում են միշտ բարեւ շարտել մեր վրայ, որ սակայն մեզ չեն հասնում: Այդ թերթերից մէկը, որի անունը երբեք տալու արժանի չենք համարել «Հնչակում» եւ որը երբեք եւ ոչ մի դէպքում Հնչակեան կուսակցութեան հետ ոչ մի կապ ու գործակցական յարաբերութիւն չէ ունեցել և չէր կարող ունենալ, վերջերս մի ծանր ամբաստանութիւն է բարդում մեր վրայ, եւ հէնց այդ է պատճառը, որ մենք այսօր ստիպված ենք տալ նրա անունը: Ամերիկայի Նիւ-Եօրկ բաղաբում հրատարակվող «Հայքը» — մենք սովինք այն թերթի անունը, — որ իր սովորութեան համեմատ՝ ամեն մէկ առաջին պատահած մութ անձնաւորութեան տխմար գրիչը հիւրասիրում է եւ շարունակ իւր Հայաստանից ստացված, բայց իսկապէս Նիւ-Եօրկում թխված կեղծ նամակներ ու առակներ է յորհնում, վերջերս տխմարաւոր, տգիտաբար ու զգուշի կերպով և բոլորովին անտեղեակ տեղի ունեցած դէպքերին՝ խօսում է երեք տա-

րի առաջ կարինում պատահած նոյն բաղաբացի կերպքների սպանութեան մասին: Այդ սպանութիւնը վերագրում է նա Հնչակեաններին եւ ինչ-որ «Գրոջակեաններին»: Այդպիսի ծանր ամբաստանութիւն անելով յորհուածագործի պարտականութիւնն էր որոշել թէ իսկապէս դրանցից ո՞րմէն էր այդ սպանութիւնը կատարողը: Նա այդ չէ անում: Ինչ վերաբերում է Հնչակեաններին, մենք յայտարարում ենք հետեւեալը. — «Հայքը» այդ սպանութիւնը մեզ վերագրելով, բացարձակաբար ու վատաբար զրկարարում ու ստում է: Կերպքեանն ինքը Հնչակեան էր և նրան սպանողներն այն հայ «գործիչ» ինքնակոչներն էին, որ իրանց եռամեայ անգոյ գոյութիւնից ի վեր միայն մի տարօրինակ, անարդարանալի և իրանց նկատմամբ խիստ բնորոշ նպատակ, *idée fixe* են ունեցել — փնտսել Հնչակեանների գործունէութեան և «կործանել» (sic) «Հնչակը»: Կերպքեանի սպանութեան վերաբերեալ բոլոր թղթերն ու վկայագրերը գտնվում են խմբագրութեան ձեռքի տակ, որոնք, զանազան հանգամանքներ աչքի առջեւ ունենալով, մինչեւ այսօր հարկ չենք համարել հրատարակել: «Հայք», լաւ կանէք՝ միշտ ձեր չափը ճանաչեք...

Մ.

Սովի խնդրի կարեւորութիւնն ի նկատի առնելով, յՅօցիալիստական գաղափարը՝ վերնագրով թերթիս նախորդ երկու համարի առաջնորդողի շարունակութեան տպագրութիւնը ստիպեցանք յետաձգել մինչեւ յաջորդ համարը:

Տեղի սրտութեան պատճառով չը կարողացանք շէնչակի՝ ներկայ համարում գետեղել տեղեկութիւններ այս տարւայ Մայիս 1-ի Բանւորական Համաշխարհային Ցոյցի մասին, թողնելով այն յՀնչակի՝ յաջորդ համարին:

Չորս տարւայ ընթացքում հայկական հօրիզոնի վրայ գիտաւոր աստղի պէս, մերթ ընդ մերթ, աննկատելի կերպով երեւացող և իր ամեն-մի համարում մի-մի նոր, մի-մեանց հակառակ ծրագիրներ հնարող Պրոջակ՝ անունով մի թերթի Nr 7. ում (ընդամենը — չորս տարւայ մէջ) մի յօդուած է ուղղված յՀնչակի՝ դէմ: Ի նկատի առնելով, — ոչ թէ յՊրոջակի՝ գրողին խօսք հակացրնելը — որ նրա ընթերցողները (թէեւ խիստ սակաւաթիւ) կարող են յհնչիւն դրամի՝ տեղ ընդունել մեր գաղափարների դէմ նրա գրածները և այդ գաղափարներին նրա տված բռնի բացատրութեան ճիգերը, մենք աւելորդ չենք համարում պատասխանել նրան յՀնչակի՝ յետագայ համարներից մէկում, ներկայ համարի տեղի սրտութիւնը չը ներելով մեզ այդ անել: Առայժմ, սակայն, յՊրոջակի՝ խորագէտ, որոշ գաղափարների տէր և հակասութեան մէջ երբեք չը մտնող գրողին կամ գրողներին, որոնց մէջ հին վրէժն է խաղացել, խորհուրդ ենք տալիս լուրջ կերպով մտածել իր իրավիճակի յՀայիւն և Կապիկ՝ առակի վրայ. — յՈւրիշին այսպէսնու տեղ, լաւ չէր լինիլ բարեկամ, նախ քեզ վրայ նայէիլ:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ուղարկել հետեւեալ հասցեով. —

Athènes. (Grèce). — M. Beniard. Poste restante.

Աթէնք. Հայկական ազատ տպարան.